

**ԵԳՊԱ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ,
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՒ ԾՐԱԳՐԵՐԸ**

Կենտրոնի ռազմավարությունը

ա. Մշտապես վերլուծել եւ գնահատել ԵԳՊԱ մասնագիտական ռեսուրսները եւ նյութական ու ֆինանսական հնարավորությունները հետազոտության գործունեության ծավալման համար եւ այդ ուղղությամբ կատարել կատարելագործման, զարգացման եւ ընդլայնման հարկավոր աշխատանքներ:

բ. Առավելագույնս ներգրավել ԵԳՊԱ ուսանողներին եւ շրջանավարտներին հետազոտական աշխատանքներում՝ կոմպետենտ եւ մրցունակ երիտասարդ կադրեր պատրաստելու համար:

գ. Առանձնապես ուշադրություն դարձնել սերունդների միջեւ կապի հաստատման, գիտելիքի եւ փորձառության փոխանցման, նոր մասնագետ սերնդի պատրաստման խնդրին

դ. Որպես առաջնահերթություն հետեւել օտար լեզուների իմացության եւ ինֆորմացիոն տեխնոլոգիաների հմտության մակարդակի բարձրացմանը

ե. Մշտապես ուսումնասիրել Հայաստանում եւ արտասահմանում արվեստի պատմության եւ տեսության, հայ արվեստի պատմության հետազոտությունների առկա իրավիճակը եւ հետաքրքրությունների շրջանակը, ինչպես նաեւ հետազոտական զարգացման ուղղությունները եւ հետազոտական թեմաների ժամանակակից միտումները

զ. հնարավորին չափ շահագրգռել ԵԳՊԱ-ում իրականացվող հետազոտության միջազգայնացումը

ԵԳՊԱ հետազոտական ուղղությունները

Հետազոտության ուղղությունները որոշվել են՝ հաշվի առնելով.

- ԵԳՊԱ մասնագիտական ներուժը եւ ռեսուրսները,
- բուհում գոյություն ունեցող ավանդույթները,
- Հայաստանում եւ արտասահմանում արվեստաբանության, հայ արվեստի պատմության եւ կերպարվեստի, դիզայնի ու կիրառական արվեստի

հետազոտությունների առկա իրավիճակը, հետաքրքրությունների շրջանակը, ժամանակակից միտումները, արդիական, պահանջարկ ունեցող եւ քիչ ուսումնասիրված թեմաները,

որոնք կապահովեն բուհում կատարվող հետազոտության մրցունակությունը՝ եւ տեղական, եւ միջազգային մակարդակով:

Արվեստի պատմություն եւ տեսություն

Առաջնահերթություն է համարվում միջգիտակարգային (interdisciplinary) հետազոտությունների խրախուսումը՝ պատմության, բանասիրության, ճարտարապետության, հնագիտության, գեղագիտության եւ փիլիսոփայության գիտակարգերի հետ առնչության շրջանակներում՝ հետեւյալ թեմատիկ ուղղություններով.

1) **Վաղքրիստոնեական եւ միջնադարյան շրջանների հայ արվեստի ուսումնասիրությունը**՝ արելեւաքրիստոնեական մշակույթի, կովկասագիտության եւ բյուզանդագիտության համատեքստում՝ ընդհանրությունների եւ առանձնահատկությունների վերհանմամբ, որ թույլ կտա առավել հիմնավոր կերպով մեկնաբանել եւ արժեւորել հայ արվեստը (*մասնավորապես խրախուսվում է «Երուսաղեմյան սրբազան ավանդույթի ազդեցությունը հայ միջնադարյան արվեստի, աստվածաբանության եւ մշակույթի վրա» թեման*)

2) **Հայ արվեստաբանության պատմության ուսումնասիրություն**, որ գրեթե չհետազոտված ոլորտ է եւ թույլ կտա հարստացնել եւ ամբողջացնել գիտելիքները հայ արվեստաբանական մտքի, դպրոցի, խորհրդային եւ միջազգային գիտական բանավեճերի բովում հայ մասնագետների տեսակետների ու դիրքորոշումների մասին:

3) **Հայ ժամանակակից արվեստի ուսումնասիրություն** (80-ականներ, հետանկախության շրջան), որ կրկին քիչ հետազոտվող բնագավառ է եւ մեծ պոտենցիալ է պարունակում՝ հատկապես մասնագիտական մրցունակության ապահովման եւ միջազգայնացման տեսանկյունից:

4) **Կանանց դերն ու գործունեությունը արվեստի եւ մշակույթի զարգացման մեջ. Պատմություն եւ ներկա ժամանակ**

Կերպարվեստ (գեղանկար, քանդակ, գրաֆիկա)

Առաջնահերթություն է համարվում միջորոտային հետազոտությունների խրախուսումը՝ արվեստի տարբեր տեսակների, ճյուղերի եւ տեխնոլոգիաների միջեւ:

1) **Ավանդույթը արդիականության մեջ եւ արդիականը ավանդույթում**. գեղանկարչական ազգային ավանդույթի եւ արվեստի ժամանակակից տենդենցների

հարաբերությունը՝ ինչպես հորինվածքային եւ կատարողական տեխնիկայի, այնպես էլ գաղափարային բովանդակության համատեքստում:

2) **Քաղաքային թեմատիկա.** «Քաղաք եւ քաղաքային մշակույթ» ծրագիր:

3) **Գեղանկարի եւ քանդակի համադրման տեխնիկաներ եւ տեխնոլոգիաներ:**

4) **Գրաֆիկական լուծումներ թվային արվեստում.** Ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործումը եւ պոստենցիալ հնարավորությունները գրաֆիկայում

5) **Նորարարական կոնցեպտներ եւ գեղարվեստական լուծումներ՝ գրքի նկարագարդման ոլորտում**

6) **Նորարարական-փորձարարական եւ դասական տեխնոլոգիաների համադրում տպագրական գրաֆիկայում**

7) **Հորինվածքի տեսություն.** դասականից դեպի ժամանակակից միտումներ

Դիզայն եւ կիրառական արվեստ (համակարգչային գեղարվեստական ձեւավորում, մոդելավորում, խեցեգործություն)

1) **Համացանցային կայքերի դիզայն.** Գեղարվեստական մտածողություն եւ թվային հնարավորություններ

2) **Հաղորդակցության (communication) ժամանակակից միջոցների գեղարվեստական կոնցեպտուալացում**

3) **Ժամանցային-տեղեկատվական հավելված ծրագրերի գեղարվեստական ձեւավորման խնդիրները**

4) **Հայկական նորաձեւության միտումները միջազգային համատեքստում.** ազգային ավանդույթի եւ արդիականության փոխհարաբերությունը

5) **Խեցեգործությունը ներքին եւ արտաքին հասարակական միջավայրում**

6) **Խեցեգործության կիրառումը արտթերապիայում**

Կենտրոնի երկարաժամկետ, միջնաժամկետ եւ կարճաժամկետ ծրագրերը

Երկարաժամկետ

ա. ԵԳՊԱ հետազոտական գործունեությունն արտացոլող պարբերականի՝ Գեղարվեստի ակադեմիայի տարեգրքի հրատարակում, որակական չափանիշների պահանջների անընդհատ բարձրացում

բ. Արվեստի պատմության, կերպարվեստի, դիզայնի եւ կիրառական արվեստի, հումանիտար հետազոտությունների եւ հայագիտության մատենագիտական-տեղեկատվական ֆոնդի (թղթային եւ թվային) ստեղծում, համակարգում, մշտական հարստացում (2016-2026)

գ. Հայ արվեստի լիակատար մատենագիտության կազմում եւ ապագա հրատարակության պատրաստում (2014-2024)

Միջնաժամկետ

ա. Մշակել եւ ներդնել Տեմպուս Վերիտասով իրականացվող Ասպիրանտական կրթության նոր ծրագիրը՝ ըստ նոր չափանիշների, որտեղ ընդգրկված կլինի նաեւ կերպարվեստի, դիզայնի եւ կիրառական արվեստի բնագավառներում կատարողական-ստեղծագործական աշխատանքը (2014-2018)

բ. Պարբերական ու կանոնավոր ավանդույթ դարձնել ԵԳՊԱ դասախոսների, դրսից հրավիրյալ մասնագետների եւ ԵԳՊԱ ուսանողների զեկույց-պրեզենտացիաները, սեմինար քննարկումները:

գ. Հայ արվեստի պատմության եւ տեսության տարբեր խնդիրներին նվիրված գիտաժողովի եւ գիտական հոդվածների ժողովածուի պատրաստում (2016-2018)

Կարճաժամկետ

ա. Կենտրոնի եւ արվեստի պատմության ամբիոնի համատեղ մասնակցությունը՝ Երերույք-Անիպեմզա մշակութային-վերականգնողական միջազգային ծրագրի շրջանակներում Անիպեմզայում սովետական կյանքի եւ մշակույթի ժամանակակից թանգարանի ստեղծման աշխատանքներին (2017-2018):

բ. Կենտրոնի մասնակցություն Պոլ Գետի հիմնադրամի եւ Լոնդոնի համալսարանի Արվեստի ինստիտուտի կազմակերպած «Հաղորդակցվող արվեստի պատմություններ» (Connecting Art Histories) միջազգային ծրագրին, (2016-2017)

գ. Հավաքել եւ համակարգել ԵԳՊԱ պրոֆետրադասսախոսական համակազմի մատենագիտական ցանկը (2018)

բ. ստեղծել եւ լրացնել Գեղարվեստի ակադեմիայի տարեգրքի կայքը (2016 մարտ-մայիս)

Կենտրոնի տնօրեն՝

ՆԱԶԵՆԻ ՂԱՐԻԲՅԱՆ